# ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1

ք. Մեծամոր «26» նոյեմբերի 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոդերն Հոլդինգս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մխիթարյանի, որը գործում է «Մոդերն Հոլդինգս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Նոր Կեսարիա Մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ

Հավելված 1
«26 » սեպտեմբեր 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | աշխատանքի | | | | | | կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ | Հասցեն | Ժամկետը |
| 1 | 45611200/502 | Նոր Կեսարիա Մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | Նոր Կեսարիա Մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է Հավելված 1.1-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 2-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովվում է կատարողը/կապալառուն իր միջոցներով: | դրամ | 1 | 6,600,000.00 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնք | Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և այսնակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239137
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավարՎահրամ Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն Գեղամ Միքայելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«26» հոկտեմբերի 20 թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ
# ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN | ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ОБОСНОВАНИЕ | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ НАИМЕНОВАНИЕ РАБОТ | ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ ЕДИНИЦА ИЗМЕРЕНИЯ | ԾԱՎԱԼԸ ОБЬЕМ | 1 ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔԸ /հազ. Դրամ/ СТОИМОСТЬ 1 ЕДИНИЦЫ /тыс. AMD/ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ ОБЩАЯ СТОИМОСТЬ /ՀԱԶ. ԴՐԱՄ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | **1. ՋԵՌՈՒՑՈՒՄ** | | | | |
| 1 | E18--71 | Ջեռուցման միակոնտուրանի կաթսայի տեղադրում, կոնդեսացիոն, Q=90կվտ, ներառյալ ծխատարը Монтаж одноконтурного отопительного котла конденсационный Q = 90 кВт, включая дымоход | հատ/шт | 1.00 | 751.261 | 751.261 |
| 2 | E18--165 | Ջեռուցման շրջանառու պոմպի տեղադրում BUP 15-1.5 U 130 УСТАНОВКА НАСОСОВ ЦЕНТРОБЕЖНЫХ | հատ/шт | 1.00 | 25.000 | 25.000 |
| 3 | E16--134 | Զտիչի տեղադրում Φ50մմ Установка фильтра | հատ/шт | 2.00 | 25.000 | 50.000 |
| 4 | ինֆ տեղ/пр. лист | Անցում /ամերիկանկա/ Φ50մմ Переход / американка / Φ50 мм | հատ/шт | 2.00 | 3.000 | 6.000 |
| 5 | E16--134 | Փականի տեղադրում Φ50մմ Установка крана Φ50 мм | հատ/шт | 2.00 | 4.000 | 8.000 |
| 6 | E16--134 | Փականի տեղադրում Φ25մմ Установка крана Φ25 мм | հատ/шт | 2.00 | 1.500 | 3.000 |
| 7 | E16--134 | Դատարկման փականի տեղադրում Φ20մմ Установка крана Φ20 мм | հատ/шт | 4.00 | 1.500 | 6.000 |
| 8 | E46--50 | Անցքերի բացում քարե պատերում Пробивка отверстий в стенах | տեղ/мест | 6.00 | 2.000 | 12.000 |
| 9 | 23--136 | Անցքերի փակում պատերում և միջնապատերում Закрытие отверстий в перегородках и стенах | մ3 /м3 | 0.12 | 3.000 | 0.351 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | E18--112 | Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում<br>Монтаж алюминиевых радиаторов отопления | էկմ/экм | 239.50 | 0.500 | 119.750 |
| 11 | ինֆ տեղ/пр. лист | Ալյումինե ջեռուցման մարտկոց H=500մմ Радиатор отопления алюминиевый H = 500мм | հատ/шт | 479.00 | 1.800 | 862.200 |
| 12 | ինֆ տեղ/пр. лист | Մարտկոցի կախիչ<br>Подвеска для радиатора | զույգ/комп | 38.00 | 0.600 | 22.800 |
| 13 | ինֆ տեղ/пр. лист | Մարտկոցի վերին փական Ф15<br>Верхный вентил Ф15 | հատ/шт | 38.00 | 1.500 | 57.000 |
| 14 | ինֆ տեղ/пр. лист | Մարտկոցի ներքին փական Ф15<br>Нижный вентил Ф15 | հատ/шт | 38.00 | 1.500 | 57.000 |
| 15 | շուկա/ринок | Օդհանիչ 1/2<br>Воздухасбросник 1/2 | հատ/шт | 38.00 | 0.150 | 5.700 |
| 16 | շուկա/ринок | Խցափակիչ 1/2<br>Заглушка 1/2 | հատ/шт | 38.00 | 0.150 | 5.700 |
| 17 | E16--261 | Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=20x3.0 մմ խողովակների մոնտաժում<br>ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=20x3.0 мм | գմ/пм | 77.00 | 0.300 | 23.100 |
| 18 | E16--262 | Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=25x3.5 մմ խողովակների մոնտաժում<br>ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=25x3.5 мм | գմ/пм | 70.00 | 0.450 | 31.500 |
| 19 | E16--263 | Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=32x4.0 մմ խողովակների մոնտաժում<br>ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=32x4.0 мм | գմ/пм | 110.00 | 1.000 | 110.000 |
| 20 | E16--264 | Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=40x5.0 մմ խողովակների մոնտաժում<br>ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=40x5.0 мм | գմ/пм | 140.00 | 1.550 | 217.000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | E16--265 | Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=50x5.5 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=50x5.5 мм | գմ/пм | 16.00 | 2.800 | 44.800 |
| 22 | շուկա/ринок | Մեկուսիչ Ф40 խողովակի համար Труба теплоизоляция Ф40 для трубы | գմ/пм | 12.00 | 0.400 | 4.800 |
| 23 | շուկա/ринок | Մեկուսիչ Ф32 խողովակի համար Труба теплоизоляция Ф32 для трубы | գմ/пм | 16.00 | 0.350 | 5.600 |
| 24 | ինֆ տեղ/ пр. лист | Փոխակերպիչ Ф50/40 ПЕРЕХОД Ф50/Ф40 | հատ/шт | 2.00 | 0.250 | 0.500 |
| 25 | ինֆ տեղ/ пр. лист | Փոխակերպիչ Ф50/20 ПЕРЕХОД Ф50/Ф20 | հատ/шт | 2.00 | 0.230 | 0.460 |
| 26 | ինֆ տեղ/ пр. лист | Փոխակերպիչ Ф32/Ф25 ПЕРЕХОД Ф32/Ф25 | հատ/шт | 4.00 | 0.075 | 0.300 |
| 27 | ինֆ տեղ/ пр. лист | Փոխակերպիչ Ф25/Ф25 ПЕРЕХОД Ф25/Ф20 | հատ/шт | 2.00 | 0.070 | 0.140 |
| 28 | ինֆ տեղ/ пр. лист | Անկյունակ փոխակերպիչ, 40x32մմ-90º Угловой преобразователь, 40x32мм-90º | հատ/шт | 4.00 | 0.400 | 1.600 |
| 29 | ինֆ տեղ/ пр. лист | Անկյունակ 90º Ф20մմ УГОЛОК 90º Ф20 | հատ/шт | 96.00 | 0.050 | 4.800 |
| 30 | ինֆ տեղ/ пр. лист | Անկյունակ 90º Ф25մմ УГОЛОК 90º Ф25 | հատ/шт | 2.00 | 0.080 | 0.160 |
| 31 | ինֆ տեղ/ пр. лист | Անկյունակ 90º Ф32մմ УГОЛОК 90º Ф32 | հատ/шт | 48.00 | 0.200 | 9.600 |
| 32 | ինֆ տեղ/ пр. лист | Անկյունակ 90º Ф50մմ УГОЛОК 90º Ф50 | հատ/шт | 2.00 | 0.650 | 1.300 |
| 33 | ինֆ տեղ/ пр. лист | Անկյունակ 90º Ф40մմ УГОЛОК 90º Ф40 | հատ/шт | 36.00 | 0.370 | 13.320 |
| 34 | ինֆ տեղ/ пр. лист | Եռաբաշխիչ Ф25*20*25մմ ТРОЙНИК Ф25*20*25 | հատ/шт | 20.00 | 0.100 | 2.000 |
| 35 | ինֆ տեղ/ пр. лист | Եռաբաշխիչ Ф32*20*32մմ ТРОЙНИК Ф32*20*32 | հատ/шт | 32.00 | 0.200 | 6.400 |
| 36 | ինֆ տեղ/ пр. лист | Եռաբաշխիչ Ф50*50*50մմ ТРОЙНИК Ф50*50*50 | հատ/шт | 2.00 | 0.800 | 1.600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 37 | ինֆ տեղ/ пр. лист | Եռաբաշխիչ Φ50*40*50մմ ТРОЙНИК Φ50*40*50 | հատ/шт | 2.00 | 0.700 | 1.400 |
| 38 | ինֆ տեղ/ пр. лист | Եռաբաշխիչ Φ40*20*40մմ ТРОЙНИК Φ40*20*40 | հատ/шт | 40.00 | 0.200 | 8.000 |
| 39 | ինֆ տեղ/ пр. лист | Եռաբաշխիչ Φ40*40*40մմ ТРОЙНИК Φ40*40*40 | հատ/шт | 2.00 | 0.350 | 0.700 |
| 40 | ինֆ տեղ/пр. лист | Կցամաս պոլիպրոպիլենային d=25մմ Муфт полипропиленовый d = 25мм | հատ/шт | 10.00 | 0.056 | 0.560 |
| 41 | ինֆ տեղ/пр. лист | Կցամաս պոլիպրոպիլենային d=32մմ Муфт полипропиленовый d = 32мм | հատ/шт | 10.00 | 0.125 | 1.250 |
| 42 | ինֆ տեղ/пр. лист | Կցամաս պոլիպրոպիլենային d=40մմ Муфт полипропиленовый d = 40мм | հատ/шт | 10.00 | 0.210 | 2.100 |
| 43 | շուկա/ринок | Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=20մմ Монтажный элемент со стенкой трубы d = 20 мм | հատ/шт | 78.00 | 0.050 | 3.900 |
| 44 | շուկա/ринок | Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=25մմ Монтажный элемент со стенкой трубы d = 25 мм | հատ/шт | 72.00 | 0.050 | 3.600 |
| 45 | շուկա/ринок | Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=32մմ Монтажный элемент со стенкой трубы d = 32 мм | հատ/шт | 112.00 | 0.060 | 6.720 |
| 46 | շուկա/ринок | Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=40մմ Монтажный элемент со стенкой трубы d = 40 мм | հատ/шт | 140.00 | 0.100 | 14.000 |
| 47 | E46-109 | Հատակի պրեսգրանիտե սալիկների քանդում խողովակաշարի անցկացման համար Снос керамической плитки пола под укладку трубопровода | մ2 / м2 | 14.40 | 1.500 | 21.600 |
| 48 | 23--160 | Բետոնի քանդում Снос бетона | մ3 /м3 | 1.92 | 10.000 | 19.200 |
| 49 | E11-11 | Հատակի մասնակի բետոնացում B15 դասի բետոնից Частичное бетонирование площадки из бетона класса B15 | մ3 / м3 | 1.92 | 25.000 | 48.000 |
| 50 | 11-135 | Հատակի պրեսգրանիտե սալիկների վերականգնում /սալիկը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Укладка керамической плитки для пола / согласование плитки с заказчиком / | մ2 / м2 | 14.40 | 2.993 | 43.101 |
| | | | | | ***Ընդամենը*** | ***2644.873*** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը / Итого | | | | ***2644.873*** |
| | | Վերադիր ծախսեր 13.3% / Накладные расходы 13,3% | | | | 351.768 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***2996.642*** |
| | | Շահույթ 11.0% / Прибыль 11,0% | | | | 329.631 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***3326.272*** |
| | | Ժամանակավոր շենքեր և կառույցներ 1.0% Временные постройки и сооружения 1.0% | | | | 33.263 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***3359.535*** |
| | | Ձմեռային թանկացումներ 0.60% Зимнее повышение цен 0.60% | | | | 20.157 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***3379.692*** |
| | | Փոքր ծավալի ՇՄԱ 2% Мелкие строительно-монтажные работы 2% | | | | 67.594 |
| | | Առաջացած աղբի տեղափոխում 0.15% Вывоз мусора 0,15% | | | | 5.070 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***3452.355*** |
| | | Սարքավորումներ/ Оборудование | | | | 1966.364 |
| | | Ընդամենը /ներառյալ սարքավորումները/ | | | | ***5418.719*** |
| | | Չնախատեսված ծախսեր 1.5% / Непредвиденные расходы 1,5% | | | | 81.281 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***5500.000*** |
| | | ԱԱՀ 20% / 20% НДС | | | | 1100.000 |
| | | Ընդամենը / Итого | | | | ***6600.000*** |

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239137
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյան
---------------------------
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն Գեղամ Մխիթարյան
---------------------------
/ստորագրություն/Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 26 » հուլիսի 2022թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի*

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԳՐԱՖԻԿ**
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Նոր Կեսարիա Մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների սկզբից 30 օրացուցային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | Աշխատանքների սկզբից 30 օրացուցային օրվա ընթացքում |

*Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239137
ՀՎՀՀ 04440608
համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյան

_______________________
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Մոդեռն Հոլդինգս>>ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք
Բաղրամյան փողոց 31/2
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061
Տնօրեն Գեղամ Մխիթարյան

_______________________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«26 »հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են առողական կարգով:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | <<Մողեոն Հոլդինգս>>ՍՊԸ |
| ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 | ՀՀ Արմավիրի մարզ Արմավիր համայնք Բաղրամյան փողոց 31/2 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ Արմավիրի մ/ճ |
| Հ/Հ 900332239137 | Հ/Հ 220033332895000 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 04437061 |
| համայնքի ղեկավարՎահրամ Խաչատրյան | Տնօրեն Գեղամ Մխիթարյան |
| ________________ | ________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 4*
*« 26 » նոյեմբերի 2022թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

________________________

________________________

գտնվելու վայրը ____________

հհ ____________________

հվհհ __________________

Պատվիրատու

________________________

________________________

գտնվելու վայրը ____________

հհ____________________

հվհհ__________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «           » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «               » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
26.10.2022 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «22» 11 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մխիթարյանի, որը գործում է «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.10.2022թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5, 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքի ձեռքբերման համար հատկացված 6,600,000.00 (վեց միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով ներկայացված աշխատանքի կատարման ժամկետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «*Պայմանագիրը կնքելու օրվանից և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում*»:
2. Պայմանագրի Հավելված N 2-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239137
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար________ Վ. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Բաղրամյան փողոց 31/2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061

տնօրեն________ Գ. Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*«26» հոկտեմբերի 2022թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի*
*«22» 11 2022թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դեկտեմբեր | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611200/502 | Նոր Կեսարիա Մշակույթի տան ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6,600,000.00 | 6,600,000.00 | 6,600,000.00 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239137
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------- Ա. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք,
Բաղրամյան փողոց 31/2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արմավիրի մ/ճ
Հ/Հ 220033332895000
ՀՎՀՀ 04437061

տնօրեն---------------- Գ. Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ